

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**



**«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԸ ԵՎ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ***

ՀՏԴ 355.1

DOI: 10.52063/25792652-2023.3.18-62

ԴԱՎԻԹ ԹՈՐՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Davit.Torosyan@ysu.am
ORCID: 0009-0005-9389-7447

Հոդվածի նպատակն է ներկայացնել «քաղաքական գիտակցություն» հասկացությունը, դրա ձևավորումը, զարգացումը և կայացումը որպես քաղաքականության սուբյեկտիվ ասպեկտ: Հոդվածում որպես առանցքային խնդիր դրվել է զինձառայողների քաղաքական գիտակցության վերաբերյալ առկա տեսակետների ուսումնասիրությունը, տարածված մոտեցումների ճշմարիտ կամ կեղծ լինելը պարզելը և, ըստ անհրաժեշտության, զինձառայողների քաղաքական գիտակցության վերաբերյալ նոր մոտեցումների առաջարկումը:

Վերը դրված նպատակի կենսագործման և խնդիրների լուծման համար օգտագործել ենք դիալեկտիկայի (ենթադրում է երևույթների դիտարկումը շարժման, զարգացման և փոփոխության ընթացքի մեջ), ինչպես նաև բացահայտողական և նկարագրողական և այլ մեթոդները: Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննության, պատմական, պատմահամեմտական, նոմոթետիկ, իդեոգրաֆիկ և մի շարք այլ մեթոդների կիրառմամբ:

Կատարված վերլուծությունների արդյունք համարվող եզրակացությունները ուշագրավ էին հատկապես «քաղաքական գիտակցություն» եզրույթի նորովի մեկնաբանման և զինձառայողների քաղաքական գիտակցությունը «քաղաքական թոհուրոհից» գերծ դիտարկելու ֆոնին: Քաղաքական գիտակցության հասկացության մասնագիտական մեկնաբանության արդյունքում պարզել ենք, որ քաղաքական գիտակցությունը հասարակական-քաղաքական համատեքստ է և առավելապես միտված է զանգվածների, առանձին խմբերի և անհատների շրջանում հասարակական և քաղաքական կայուն արժեքների,

* Հոդվածը ներկայացվել է 08.09.2023թ., գրախոսվել՝ 09.10.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2023թ.:

գաղափարների, մոտեցումների, համոզմունքների ձևավորմանը: Ըստ այդմ, գինձառայողների՝ հասարակության քաղաքական կյանքին անմիջական ներգրավվածության արգելքներն ամենևին չեն վկայում այն մասին, թե նրանք չպետք է ունենան քաղաքական գիտակցություն, քանի որ «քաղաքական գիտակցություն» եզրույթը չի կապվում միայն կուսակցություններին անդամակցելու և «քաղաքական թոհուբոհին» մասնակցելու հետ:

Չիմաբառեր՝ քաղաքական գիտակցություն, գինձառայող, բանակ, գինված ուժեր, հասարակական-քաղաքական կյանք, պետության ռազմական քաղաքականություն, Չայաստան, Արցախ:

Նախաբան

Բացառելով մասնակցությունը և շարունակական ներգրավվածությունը հասարակության քաղաքական կյանքին՝ այնուամենայնիվ, յուրաքանչյուր գինձառայող, լինի ժամկետային, թե պայմանագրային, պետք է ունենա քաղաքական գիտակցության բավականին բարձր մակարդակ, մասնավորապես՝ Արցախի Չանրապետության (այսուհետ՝ ԱՉ) և Չայաստանի Չանրապետության (ՉՉ) ներկայիս օրհասական դրության պայմաններում, որպեսզի կարողանա օբյեկտիվ գնահատական տալ քաղաքական երևույթներին և գործընթացներին, կարողանա ձևավորել անհատական քաղաքական գիտակցություն, որն էլ ըստ անհրաժեշտության որոշակի պահի կարող է ազդել զանգվածային քաղաքական գիտակցության վրա և պետության ռազմական քաղաքականությունն ուղղորդել՝ ի նպաստ ԱՉ և ՉՉ պետականության ամրապնդման:

Ասվածից բխում է, որ թե՛ մինչբանակային կյանքում, թե՛ բանակային կյանքում պետք է շարունակական աշխատանք տարվի գինձառայողների քաղաքական գիտակցության ճիշտ ձևավորման, ապա նաև զարգացման ուղղությամբ, իսկ դա հնարավոր է անել նախ և առաջ արմատացած սխալ գաղափարախոսությունների վերացման դեպքում:

«Քաղաքական գիտակցություն» եզրույթը, մեկնաբանությունները մասնագիտական գրականության մեջ

«Քաղաքական գիտակցությունը» որպես գիտական եզրույթ անկյունաքարային է քաղաքագիտության համար, իսկ որպես դրսևորում առանձնակի նշանակություն ունի հասարակության համար, մասնավորապես վերջին տարիների համաշխարհային քաղաքական զարգացումների լույսի ներքո, որոնց ընկալումը և դրանց զուգընթաց կայացումը անհնար կլինի հասարակության անդամների ոչ պատշաճ քաղաքական գիտակցության առկայության դեպքում:

Առօրյա կյանքում հաճախ հանդիպում ենք այնպիսի տեսակետների, որոնք քաղաքական գիտակցությունը սերտաճեցնում են քաղաքական կուսակցությունների գործունեությանը մասնակցելուն, վերջիններիս գաղափարներին հարելուն, դեմ կամ կողմ լինելուն: Սակայն վերջիններս քաղաքական գիտակցության միայն որոշ, չնչին մասն են կազմում:

Ի հակադրումն հասարակության մեջ տարածված թյուր տեսակետի՝ մասնագիտական աղբյուրներում քաղաքական գիտակցությունը մեկնաբանվում է որպես բավականին բարդ երևույթ, որը ձևավորվում է հասարակության անդամների կողմից սոցիալական իրականության քննադատական վերաարժևորման, զգայական պատկերացումների ռացիոնալ վերափոխման, հասարակական կամ քաղաքական շարժումների իմաստի ընկալման, դրանց հարելու կամ որոշակի դրական/բացասական գնահատական տալու կարողունակության ձևավորման, այս կամ այն քաղաքական իդեալներին արդարամիտ կամ ոչ արդարամիտ համարելու

արդյունքում (Михайлова 174): Օ.Վ.Միխայլովան թվարկել է այն հիմքերը, որոնք հանգեցնում են քաղաքական գիտակցության ձևավորմանը, սակայն հասկացողային սահմանում հեղինակը չի տվել: Միևնույն ժամանակ հեղինակի կողմից առաջ քաշված հիմքերը թույլ են տալիս ընդգծել, որ քաղաքական գիտակցությունը, որպես ուսումնասիրության օբյեկտ, աչքի է ընկնում բացառիկ բարդությամբ և մինչ օրս, որքան էլ եզրույթը հասկացողային մակարդակում էական զարգացում է ապրել և քննարկվել տարբեր հեղինակների կողմից, միևնույն է, ընդհանուր ընդունելի սահմանում դեռևս տրված չէ:

«Քաղաքական գիտակցություն» եզրույթը հասարակագիտության տարբեր ճյուղերում կիրառման բավականին երկար պատմություն ունի, սակայն որպես ուսումնասիրության առանձին օբյեկտ հանդես է եկել քաղաքագիտության բնագավառում և լայն կիրառություն է ստացել 20-րդ դարի կեսերին: Եզրույթի սահմանման կարևորությունն ընդգծվել է այն բանից հետո, երբ մասնագիտական շրջանակներում սկսել է շրջանառվել միտք, համաձայն որի՝ քաղաքական վարքագծի և քաղաքական գործընթացների դինամիկան հասկանալու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի «անկախ փոփոխականների», ինչպիսիք են՝ քաղաքական գիտակցությունը և դրանից բխող վարքագիծը կրող սուբյեկտի ողջ մտավոր ոլորտը (Бозаджиев 132):

Մ.Վ.Դոբրինինան, Ն.Բ.Լազարենկոն քաղաքական գիտակցությունը սահմանում են որպես մենթալ դրսևորումների ամբողջություն, որոնցում արտահայտվում է քաղաքական գործընթացի առանձնահատուկ սուբյեկտի կողմից քաղաքականության ընկալումը: Բովանդակային համատեքստում այն արտացոլում է հասարակական կյանքի քաղաքական ոլորտի բոլոր ոչ ինստիտուցիոնալ բաղադրիչները: Միևնույն ժամանակ այն ցույց է տալիս, որ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, որևէ ոլորտում պետական քաղաքականության և սոցիալական գործընթացների փոփոխությունները պայմանավորված են հասարակության էլիտար և ոչ էլիտար շերտերի դիրքորոշմամբ (Добрынина, Лазаренко 109): Վերը բերված տեսակետների հիմքով կարող ենք եզրակացնել, որ քաղաքական գիտակցությունը կազմում է քաղաքականության սուբյեկտիվ ասպեկտը:

Այս հիմքով էլ ռուսական քաղաքագիտական ուսմունքներում քաղաքական գիտակցությունն առաջին հերթին դասակարգում են ըստ սուբյեկտի հայտանիշի, համաձայն որի՝ քաղաքական գիտակցությունը լինում է զանգվածային, խմբային ու անհատական: Չանզվածային քաղաքական գիտակցությունը քաղաքական իշխանության և սոցիալական կառավարման համատեքստում առկա գաղափարների, հայացքների, համոզմունքների ամբողջությունն է: Քաղաքական գիտակցության այս տեսակն առանձնանում է նրանով, որ վերը բերված գաղափարների, հայացքների, համոզմունքների ամբողջությունը վերաբերում է այնպիսի հարցերի, որոնք ունեն արդի քաղաքական բովանդակություն և հղի են որոշակի քաղաքական հետևանքներով: Այս առումով քաղաքական գիտակցությունը զանգվածային գիտակցության հատուկ, քաղաքականացված հատվածն է (Добрынина 157-158):

Ռետրոսպեկտիվ հայացք ձգելով ոչ վաղ անցյալին՝ խորհրդային շրջանին, և մեծամասամբ համակարծիք լինելով Ն.Ա.Բառանովի հետ՝ կարող ենք ասել, որ զանգվածային քաղաքական գիտակցությունը 1990-ականներին խճանկար էր՝ կազմված կոմունիստական, նեոագատական և ազգային-հայրենասիրական գաղափարախոսությունների տարրերից, որոնք պայքարում էին միմյանց դեմ և հավակնում հասարակության մեջ գերիշխող դերի: Այս պայքարի հետևանքով Նշված գաղափարախոսություններից ոչ մեկին չհաջողվեց հանրային գիտակցության մեջ հաստատել իրենց արժեքները և համախմբել քաղաքացիների մեծամասնությանը (Баранов 87): Սա, թերևս, հետևանք էր այն բանի, որ բացակայում էր կայուն

ձևավորված քաղաքական ինքնությունը, գրեթե չկային ընդհանուր ընդունելի բարձր նշանակության հասարակական-քաղաքական գաղափարներ ու նպատակներ:

Խմբային քաղաքական գիտակցությունը քաղաքագետների կողմից դիտարկվում է որպես քաղաքականության հետ կապված մեծ (սոցիալական դասեր, ազգային-էթնիկական կազմավորումներ) և փոքր (քաղաքական էլիտա, իշխող կուսակցության ղեկավար մարմիններ) խմբերի շրջանում առկա գաղափարների, հայացքների, համոզմունքների ամբողջություն: Ելնելով հասարակական-քաղաքական համակարգում խմբի օբյեկտիվ դիրքից և խմբի ինքնագիտակցության առանձնահատկություններից՝ այն մեկնաբանվում է որպես գաղափարների մի շարք, որոնք որոշում են խմբի քաղաքական գործունեության բովանդակությունը, ուղղությունն ու ինտենսիվությունը: Կառուցվածքային առումով հատուկ ուշադրություն է դարձվում խմբային քաղաքական գիտակցության մեջ գերիշխող քաղաքական դիրքորոշումներին և գաղափարական նախապատվություններին (Nikołaj Pikula 55):

Անհատական քաղաքական գիտակցությունը մեկնաբանվում է որպես «քաղաքական մարդու», անհատի հատկությունների ամբողջություն, որոնց հիմքով վերջինս կարող է ընկալել քաղաքականությունը, այս կամ այն չափով գնահատել այն և ռացիոնալ նպատակային առաջընթաց ունենալ քաղաքական համատեքստում: Այստեղ, բնականաբար, որոշակի մասնակցություն ունեն սուբյեկտիվ-հոգեբանական, տիպային բնութագրիչները և անձի գիտակցության ու վարքագծի կառուցվածքային բաղկացուցիչները, որոնք անհատի քաղաքական գիտակցության ձևավորման հիմքում են (Баранов 87):

Մեր խորին համոզմամբ՝ քաղաքական գիտակցության՝ վերը թվարկված տեսակները միմյանցից անկախ չեն կարող դրսևորվել: Կարծում ենք, որ անհատական քաղաքական գիտակցությունն ընկած է մնացյալ տեսակների հիմքում և միայն դրա պատշաճ մակարդակի առկայության դեպքում է հնարավոր ձևավորել զանգվածային կամ խմբային այնպիսի քաղաքական գիտակցություն, որը կծառայի ինչպես անհատին ու հասարակությանը, այնպես էլ պետությանն ու պետականությանը:

Ամփոփելով ռուսական քաղաքագիտական մասնագիտական աղբյուրներում շրջանառվող դրույթները՝ քաղաքական գիտակցությունը կարելի է սահմանել որպես *գաղափարների, համոզմունքների, մտեցումների, գնահատականների ամբողջություն, որը թույլ է տալիս զանգվածներին, խմբերին և անհատներին կամ առավել ընդհանրական եզրույթով՝ քաղաքական ոլորտի սուբյեկտներին ընկալել իրենց շուրջ ձևավորված հասարակական-քաղաքական մթնոլորտը և անհրաժեշտության դեպքում ունենալ հիմնավոր տեսակետ: Ըստ մեր կողմից վերը բերված սահմանման՝ քաղաքական գիտակցությունը կարող ենք վստահորեն անվանել քաղաքականության սուբյեկտիվ ասպեկտի բնութագրիչ:*

Եթե ռուսական քաղաքագիտական մասնագիտական շրջանակներն ակտիվորեն շրջանառում են «քաղաքական գիտակցություն» եզրույթը, ապա արևմտյան աղբյուրներում գերակայում է նույն հասկացության մեկնաբանությունն այլ բառամթերքով, մասնավորապես՝ «համոզմունքներ», «կարծրատիպեր», «հավատ», «մեկնալիտետ», «գաղափարախոսություն» և այլն: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ գիտակցությունը, որպես ընդհանրական հասկացություն, բնութագրական է միայն մարդկանց, իսկ Պ.Ալլմանը, համակարծիք լինելով Կ.Մարքսի հետ, նշում է, որ «գիտակցությունը բնութագրում է մարդու քաղաքական ինքնությունը», ինքնությունն էլ քաղաքական համատեքստում տարբեր բաղադրիչների առկայությունն է, ինչպիսին կարող են լինել համոզմունքները, կարծրատիպերը և այլն (Allman 5): Կ.Մարքսի մտեցումները գիտակցության վերաբերյալ կարելի է համարել հեղափոխական, որի զարգացումն էլ նպաստեց հասարակական-քաղաքական գործընթացների, իրողությունների շարունակական վերափոխմանը՝ ի նպաստ հասարակության տարբեր շերտերի:

Կ.Մարքսի գաղափարախոսության շարունակականությունը հանգեցրեց նրան, որ մի շարք հեղինակներ, մասնավորապես՝ Ս.Սանդովալը (Sandoval 179), Ա.Սիլվան (Sandoval, Silva 31), քաղաքական գիտակցությունը մեկնաբանեցին որպես հոգեբանական սոցիալական չափումների ամբողջություն, որը փոխկապակցում է տեղեկատվությունն ու իմաստները՝ «ստիպելով» անհատին կողմնորոշվել և որոշումներ կայացնել հասարակական-քաղաքական գործընթացի լավագույն ելքի ապահովման համատեքստում: Ըստ Ս.Սանդովալի՝ քաղաքական գիտակցությունը ձևավորվում է հասարակական-քաղաքական ինքնության ասպեկտներով՝ հասարակության ներսում առկա մշակութային արժեքների հիմքով (Sandoval 181):

Քաղաքական գիտակցությունը ձևավորվում է հասարակական-քաղաքական գործընթացի համատեքստում օբյեկտիվության և սուբյեկտիվության փոխազդեցությամբ: Ասվածը կենսագործվում է անհատի մոտ ձևավորված համոզմունքների, սոցիալական համատեքստի քաղաքականացված ընկալման արդյունքում: Կարող ենք ասել, որ քաղաքական գիտակցությունը հանգեցնում է սուբյեկտի հասարակական-քաղաքական բնավորության զարգացմանը: Կայուն հասարակական-քաղաքական բնավորություն ունեցող անհատներով հարուստ հասարակությունը աներկբայորեն մատնված է հաջող կենսագործման և անսասան գոյության:

Չինժառայողների քաղաքական գիտակցությունը. ընդունելի և ոչ ընդունելի ընկալումներ

Չինժառայողների քաղաքական գիտակցության ընկալման վերաբերյալ առկա են ինչպես ընդունելի, այնպես էլ ոչ ընդունելի ընկալումներ: Մեզ համար ընդունելի չէ այն ընկալումը, համաձայն որի՝ զինժառայողները չունեն, չպետք է կամ չեն կարող ունենալ քաղաքական գիտակցություն: Իհարկե, ընդունելի է, որ զինժառայողները չպետք է ներգրավվեն «քաղաքական թոհուբոհին», չպետք է մասնակցեն նախընտրական գործընթացներին և այլն, սակայն չունենալ քաղաքական գիտակցություն՝ կնշանակի վտանգի տակ դնել պետականությունը:

Չինժառայողների քաղաքական գիտակցության պարտադիր առկայության գաղափարին են հարել նաև վերջին շրջանի ռուսական մասնագիտական աղբյուրները, ինչը կարող ենք վստահորեն պայմանավորել ռուս-ուկրաինական պատերազմով և աշխարհի՝ Ռուսաստանի նկատմամբ, մեղմ ասած, ոչ բարեկամական վերաբերմունքով:

Ա.Ն.Չեմցովն ընդգծում է զինժառայողների քաղաքական գիտակցության պարտադիր բնույթը՝ պայմանավորելով այն.

- աշխարհաքաղաքական իրավիճակով, ռազմական զարգացման նորարարական բնույթով և պետական ակտիվ ռազմական քաղաքականությամբ,

- ռազմական առճակատման անգեյն ձևերի և, առաջին հերթին, տեղեկատվական ու հոգեբանական պատերազմի տարածմամբ, որոնք թույլ են տալիս զլորալացման և պետության տեղեկատվության բացության պայմաններում, առանց բացահայտ ռազմական միջամտության, պատերազմների արդյունքներին համադրելի քաղաքական արդյունքների հասնել,

- ռազմաքաղաքական աշխատանքի համակարգի վերականգնմամբ, որը լուծում է զինժառայողների/ զինվորականների քաղաքական գիտակցության ձևավորման խնդիրը (Земцов 467):

Նախկինում ՌԴ-ում ևս, ինչպես երկրների մեծ մասում, զինժառայողների քաղաքական գիտակցության վերաբերյալ տեսակետները համարվում էին տաբու: Ներկայումս չնայած իրադրությունը փոքր ինչ մեղմվել է, սակայն ռազմական-մանկավարժական գիտությունը դեռևս չի կարողանում քայլել պրակտիկային համահունչ (Земцов 467):

Կարող է թվալ, թե քաղաքական գիտակցությունն առավելապես մանկավարժական գործունեության արդյունք է, սակայն չպետք է շփոթել «քաղաքական դաստիարակություն» և «քաղաքական գիտակցություն» եզրույթները: Մեր կարծիքով՝ դրանցից առաջինը երկրորդի հիմքում է:

Չինժառայողների քաղաքական դաստիարակությունը պետք է կազմակերպվի այսօրեական պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով ռուսաստանյան ռազմական-մանկավարժական՝ արդեն իսկ հաջողված փորձը, ինչը ենթադրում է մի շարք խնդիրների լուծում, մասնավորապես.

- տարբեր դարաշրջանների պատմական, մշակութային խորհրդանիշների միասնականացում՝ հիմնվելով ՌԴ քաղաքացու ժամանակակից մշակութային խորհրդանիշների նույնականացման վրա, որոնք ընկած են զինժառայողների քաղաքական դաստիարակության հիմքում,

- արդի փուլում «զինժառայողների քաղաքական դաստիարակություն» հասկացության սահմանում,

- զինժառայողների քաղաքական դաստիարակության բովանդակության, մեթոդների, ձևերի որոշում այսօրեական պահանջների հաշվի առմամբ:

Չինժառայողների քաղաքական դաստիարակությունը վերջիններիս շրջանում երկրի պաշտպանության և ռազմական անվտանգության ոլորտի պետական քաղաքականության նկատմամբ հատուկ վերաբերմունքի ձևավորումն է: Այս համատեքստում զինժառայողների շրջանում ձևավորվում է ռազմական-քաղաքական գիտակցություն, հայրենասիրություն, զինվորական պարտականությունների կատարման նկատմամբ գիտակցված վերաբերմունք (Самедова 353):

Եթե ռուսաստանյան իրականության պայմաններում զինժառայողների քաղաքական գիտակցությունն էական զարգացում է ապրում վերջին՝ պատերազմական իրադարձությունների և ՌԴ նկատմամբ առկա բացասական վերաբերմունքի համատեքստում, ապա ԱՄՆ-ում, ՆԱՏՕ-ի անդամ և այլ երկրներում զինժառայողների քաղաքական գիտակցությունը երկրի պաշտպանական գիտակցության գերակա բաղադրիչն է համարվում՝ զուգորդվելով բարոյական-հոգեբանական և ռազմական-մասնագիտական բաղադրիչներով: Պաշտպանական գիտակցության քաղաքական տարրը սահմանում է զինժառայողների/զինվորականների գաղափարական պատրաստվածությունը հայրենիքի պաշտպանությանը, ինչպես նաև երկրի ռազմաքաղաքական դեկավարության պահանջները աներկբա կերպով և առանց քննարկելու կատարելուն (Разгонов, Лопуха 87-88):

Քաղաքական գիտակցության բարձր նշանակությունն այս մոտեցման համատեքստում ընդգծվում է մի շարք հանգամանքներով.

- արդի հասարակարգում ռազմական սպառնալիքների և դրանց իրական դրսևորման հավանականության բարձրացմամբ,
- ռազմական այն փորձով, համաձայն որի՝ հաղթում են այն բանակները, որոնց բարոյահոգեբանական վիճակը կայուն է,
- պատերազմների պատմության մեջ բազմաթիվ դրվագների հայտնիությամբ, երբ հակառակորդի նկատմամբ ուժերի էական գերակայությամբ կողմը պարտվում է՝ չունենալով զարգացած պաշտպանական-քաղաքական գիտակցություն (Разгонов, Лопуха 87-88):

Պաշտպանական գիտակցության մակարդակի ճիշտ գնահատումը մեծ նշանակություն ունեցող հիմնարար խնդիր է: Օրինակ՝ Իրաքի և Լիբիայի բանակների դեմ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի գործողության ժամանակ թե՛ զորքերի, թե՛ բնակչության պաշտպանական գիտակցության մակարդակն էականորեն ցածր է եղել: Սիրիայում ընդհակառակը՝ բնակչության և զինված ուժերի պաշտպանական բարձր

գիտակցությունը երկրին թույլ է տալիս դիմակայել ահաբեկչությանը և դրան աջակցող ուժերին:

Այսպիսով՝ ուսումնասիրվող մոտեցումներում առկա է ընդհանրական մեկ հիմնարար դրույթ՝ բոլոր պետությունները, հաշվի առնելով ներկայիս աշխարհաքաղաքական հարափոփոխ պայմանները, պատերազմների սկսման ամենօրյա վտանգը, զինծառայողների քաղաքական գիտակցությունը դնում են հայրենիքի պաշտպանության գործի հիմքում՝ քաղաքական դաստիարակության միջոցով կերտելով պատրաստական գինծառայողներ ու զինվորականներ: Սա պետք է ընդունելի փորձ լինի ՀՀ-ի համար:

Չինծառայողների քաղաքական գիտակցության վերաբերյալ ժամանակակից մոտեցումները (ՀՀ-ի օրինակով)

Մինչև վերջին ժամանակներս թե՛ հասարակական, թե՛ մասնագիտական, թե՛ քաղաքական շրջանակներում խստագույնս պնդում էին այն գաղափարը, որ զինծառայողները կամ բանակի հետ փոխկապակցված անձինք չպետք է ունենան քաղաքական գիտակցություն: Հասարակության լայն շրջանակների կողմից տարիներ շարունակ շրջանառվում է/էր այն գաղափարը, որ զինծառայողների մասնակցությունը ընտրություններին հետապնդում է որոշակի քաղաքական նկրտումներ, իսկ մեղադրանքի նիզակն ուղղվել է դեպի տվյալ պահին իշխող քաղաքական ուժը: Այնինչ, ինչպես պարզ դարձավ քաղաքական գիտակցության հասկացության մեկնաբանությունից, ինչպես նաև զինծառայողների քաղաքական գիտակցության մասով միջազգային փորձի դիտարկումից, արդի հարափոփոխ պայմաններում, մասնավորապես ՀՀ-ում խիստ կարևոր է ժամանակակից և օբյեկտիվ մեկնաբանմամբ՝ զինծառայողների քաղաքական գիտակցության ձևավորումը և/կամ մակարդակի բարձրացումը: Կարող ենք փաստել, որ վերջին տարիներին դրան միտված որոշակի գործողություններ կատարվել են:

Չինծառայողների քաղաքական գիտակցության բարձր մակարդակի ապահովման առաջնահերթ բնույթը պայմանավորում են զարգացող տեխնոլոգիաները, որոնք հնարավոր բաց (ուղղակի) և փակ (կոծկված, օրինակ՝ նորագույն տեխնոլոգիաների ներգրավմամբ, տարբեր հոլովակների միջոցով հասարակության ենթագիտակցության մեջ օտար, ոչ ընդունելի արժեքների ներարկումը) եղանակներով հանգեցնում են հայ ազգային գաղափարախոսության, ավանդական արժեքների խեղաթյուրմանը: Չինծառայողների քաղաքական գիտակցության բարձր մակարդակի ապահովման դեպքում վերջիններս կունենան կայուն բարոյական կերպար և անկոտրում կամք:

ՀՀ-ում զինծառայողների քաղաքական գիտակցության ձևավորման գործում պետք է առաջնորդվել այն սահմանափակումներով, որոնք սահմանված են «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով: Սույն օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է.

«1. Չինծառայողն իրավունք չունի՝

1) կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Ընդ որում, պետական ծառայությունը գերակայում է սույն կետում նշված աշխատանքի նկատմամբ.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնելու ընտրովի կամ այլ պաշտոններ, բացառությամբ սույն օրենքով սահմանված զինվորական պաշտոնների.

3) ստեղծելու կուսակցություններ կամ կրոնական միավորումներ, անդամակցելու որևէ կուսակցության կամ արհեստակցական միության, իսկ կրոնական միավորման

անդամ հանդիսանալու դեպքում գինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն:

4) ոչ ծառայողական նպատակների համար օգտագործելու պետական սեփականություն հանդիսացող կյուրակական արժեքներ, տեխնիկական, ֆինանսական ու տեղեկատվական միջոցներ:

5) կազմակերպելու գործադրվելու կամ մասնակցելու դրանց:

6) պաշտոնետական դիրքն օգտագործելու ի շահ կուսակցությունների, կրոնական, հասարակական կազմակերպությունների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության:

7) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ:

8) վարձատրություն ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար:

9) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2. Չինծառայողների իրավունքները և պարտականությունները, այդ թվում՝ ընտրական իրավունքն ու հանրաքվեներին մասնակցության կարգը, կարգապահական իրավունքը և կարգապահական պատասխանատվությունը սահմանվում են օրենքով՝ («Չինվորական ծառայության և գինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք):

Մեր կարծիքով՝ հաշվի առնելով վերը բերված բոլոր սահմանափակումները՝ ՀՀ-ում գինծառայողների քաղաքական գիտակցության ճիշտ ձևավորմանը հետամուտ լինելով՝ պետք է ներդնել գործուն մեխանիզմներ (համապատասխան գիտելիքներ տալ ավագ դպրոցում սովորողներին, սովորողների շրջանում ձևավորել ճիշտ պատկերացումներ «քաղաքական գիտակցություն» եզրույթի վերաբերյալ, բարձրացնել ուսումնասիրվող հասկացության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության մակարդակը՝ որպես գործուն միջոց օգտագործելով համացանցի հնարավորությունները): Թե՛ հասարակության լայն շերտերը, թե՛ գինծառայողներն անձամբ պետք է ընկալեն, որ քաղաքական գիտակցությունը, որքան էլ լայն իմաստով հարում է վերը բերված որոշ սահմանափակումներին, մասնավորապես՝ բերված հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերին, այնուամենայնիվ, քաղաքական գիտակցության նեղ մեկնաբանությամբ այն ենթադրում է իրավագիտակից, երկրի ռազմական քաղաքականությանը քաջատեղյակ, ընտրությունների միջոցով կամքն արտահայտող և հասարակական-քաղաքական որոշակի վարքագիծ դրսևորող ժամկետային, պայմանագրային գինծառայողների, ինչպես նաև հրամանատարական կազմի առկայությունը ՀՀ գինված ուժերում:

Եզրակացություն

Քաղաքական գիտակցության հասկացության մեկնաբանության, գինծառայողների քաղաքական գիտակցության վերաբերյալ անցյալում և ներկայում առկա տեսակետների ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ

- Քաղաքական գիտակցություն ասելով՝ այսօր արդեն պետք է հասկանալ ձևավորման բավականին բարդ փուլեր անցած, գաղափարների, համոզմունքների, մոտեցումների, գնահատականների այն ամբողջությունը, որը թույլ կտա հիմնարար տեսակետ ունենալ երկրում ձևավորված հասարակական-քաղաքական մթնոլորտի վերաբերյալ:

- Քաղաքական գիտակցության առանձին՝ գանգվածային, խմբային ու անհատական տեսակների դիտարկումը, դրանց սահմանումը թույլ տվեց եզրահանգել, որ քաղաքական գիտակցությունը քաղաքականության սուբյեկտիվ ասպեկտն է:

- Չինծառայողների քաղաքական գիտակցության ուսումնասիրությունը թույլ տվեց եզրահանգել, որ արդի քաղաքական պայմաններում խիստ կարևոր է

զինծառայողների շրջանում քաղաքական գիտակցության պատշաճ մակարդակի ձևավորումը, քանի որ միայն դրա առկայության դեպքում թե՛ ժամկետային, թե՛ պայմանագրային զինծառայողները հնարավորություն կունենան օր առօրե կանխատեսել քաղաքական հնարավոր դրսևորումները, հասարակական-քաղաքական զարգացումների հնարավոր սցենարները և, գործի դեպքում իրենց լիազորությունների շրջանակում հնարավոր ողջ գործիքակազմը, կհասնեն դրական արդյունքի պետության և հասարակության համար:

• Չինծառայողների քաղաքական գիտակցության բարձր մակարդակի ապահովումը, կարծում ենք, հնարավոր կլինի ազգային գաղափարախոսության այնպիսի մոտեցումների ձևավորման պայմանում, որոնք կնպաստեն զինծառայողների քաղաքական դաստիարակմանը՝ որպես ժամանակի հրամայական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Ազգային ժողով. «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք. 15 Նոյեմբերի 2017. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117633>
2. Баранов, Николай. Трансформация политического сознания современного российского общества // *Политическая экспертиза: ПОЛИТЭКС. Научный журнал*. Том 3. № 1. СПб.: Изд-во С.-Петербур. ун-та, 2007., стр.82-98.
3. Бозаджиев, Владимир. *Политическая психология: учебное пособие для студентов высших учебных заведений*. – М.: Издательский дом Академии Естествознания, 2015. – 474 с., стр. 132.
4. Добрынина, Мария. Массовое политическое сознание граждан современной России // *Гуманитарные, социально-экономические и общественные науки*, 2014. № 12-1., стр. 157-158.
5. Добрынина, Мария, Лазаренко, Нина. Особенности формирования массового политического сознания в современной России. – *Экономические и социально-гуманитарные исследования*. – №2(2) 2014., стр. 109-114.
6. Земцов, Александр. Проблемы политического воспитания военнослужащих в современной науке // *Педагогический журнал*. 2022. Т. 12. № 2А. стр.. 466-472. DOI: 10.34670/AR.2022.89.84.016
7. Михайлова, Ольга. Политическое сознание граждан на постсоветском пространстве: опыт социологического исследования // *Полития*. 2003. № 2. стр. 174-188.
8. Разгонов, Виталий, Лопуха, Александр. Формирование оборонного сознания военнослужащих // *Мир науки, культуры, образования*. 2013. № 6 (43). стр. 87-88.
9. Самедова, Юлия. Политическое воспитание военнослужащих: историко-педагогический аспект // *Социальная компетентность*. 2019. Т.4. № 4. стр. 352–362.
10. Allman, Paula. *Critical Education Against Global Capitalism. Karl Marx and Revolutionary Critical Education*, Sense Publishers, Rotterdam, Biston, Taipei., 2010, p.5.
11. Nikolaј Pikula. "Европейское политическое сознание: теоретический аспект". *Facta Simonidis* 1:45-60. <https://www.cceol.com/search/article-detail?id=643100> (Հասանելիությունը 15.09.2023)
12. Sandoval, Salvador Antonio Mireles. *The crisis of the Brazilian labor movement and the emergence of alternative forms of working-class contention in the 1990s*. *Psicologia Política*, 1(1), 2001, pp. 173-195.
13. Sandoval, Salvador Antonio Mireles, Silva, Alessandro Soares da. *O modelo de análise da consciência política como contribuição para a psicologia política dos movimentos sociais*. In: D. U. Hur, & F. Lacerda, Jr. (Orgs.), *Psicologia, políticas e movimentos sociais*, 2016, pp. 25-52.

WORKS CITED

1. Baranov, Nikolaj Alekseevich. Transformacija politicheskogo soznaniya sovremennogo rossijskogo obshhestva // *Politicheskaja jekspertiza: POLITJeKS. Nauchnyj zhurnal*. Tom 3. № 1. SPb.: Izd-vo S.-Peterb. un-ta, 2007., S.82-98., [Трансформация политического сознания современного российского общества, СПб.: Изд-во С.-Петербур. ун-та], (In Russian)
2. Bozadzhiev, Vladimir Luk'janovich. *Politicheskaja psihologija: uchebnoe posobie dlja studentov vysshih uchebnyh zavedenij*. – M.: Izdatel'skij dom Akademii Estestvoznaniya, 2015. – 474 s., s. 132. [*Политическая психология*, М.: Издательский дом Академии Естествознания], (In Russian)
3. Camedova, Julija Aleksandrovna. Politicheskoe vospitanie voennosluzhashhih: istoriko-pedagogicheskij aspekt // *Social'naja kompetentnost'*. 2019. T.4. № 4. S. 352–362. [Политическое воспитание военнослужащих: историко-педагогический аспект // *Социальная компетентность*], (In Russian)
4. Dobrynina, Marija Vladimirovna. Massovoe politicheskoe soznanie grazhdan sovremennoj Rossii // *Gumanitarnye, social'no-jekonomicheskie i obshhestvennyye nauki*, 2014. № 12-1., S. 157-158. [Массовое политическое сознание граждан современной России // *Гуманитарные, социально-экономические и общественные науки*], (In Russian)
5. Dobrynina, Marija Vladimirovna, Lazarenko Nina Ivanovna. Osobennosti formirovanija massovogo politicheskogo soznaniya v sovremenном Rossii. – *Jekonomicheskie i social'no-gumanitarnye issledovanija*. – №2(2) 2014., s. 109-114. [Особенности формирования массового политического сознания в современном России. – *Экономические и социально-гуманитарные исследования*.], (In Russian)
6. HH Azgayin jhoghov. «Zinvorakan c'ar'ayowt'yan & zinc'ar'ayoghi kargavitwaki masin» HH o'renq. 15 Noyemberi 2017. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117633>, (In Armenian)
7. Mihajlova, Ol'ga Vladimirovna. Politicheskoe soznanie grazhdan na postsovet'skom prostranstve: opyt sociologicheskogo issledovanija // *Politija*. 2003. № 2. S. 174-188. [Политическое сознание граждан на постсоветском пространстве: опыт социологического исследования // *Полития*.], (In Russian)
8. Nikolaj Pikula. "Evropejskoe politicheskoe soznanie: teoreticheskij aspekt". Facta Simonidis 1:45-60. <https://www.ceeol.com/search/article-detail?id=643100>, (In Russian)
9. Razgonov, Vitalij Leonidovich, Lopuha Aleksandr Dmitreevich. Formirovanie obronnogo soznaniya voennosluzhashhih // *Mir nauki, kul'tury, obrazovanija*. 2013. № 6 (43). S. 87-88. [Формирование оборонного сознания военнослужащих // *Мир науки, культуры, образования*.], (In Russian)
10. Zemcov, Aleksandr Nikolaevich. Problemy politicheskogo vospitanija voennosluzhashhih v sovremennoj nauke // *Pedagogicheskij zhurnal*. 2022. T. 12. № 2A. S. 466-472. DOI: 10.34670/AR.2022.89.84.016 [Проблемы политического воспитания военнослужащих в современной науке // *Педагогический журнал*.], (In Russian)

THE TERM «POLITICAL CONSCIOUSNESS» AND POLITICAL CONSCIOUSNESS OF MILITARY PERSONNEL

DAVIT TOROSYAN

*Yerevan State University,
Faculty of International Relations,
Department of Political Science, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to present the concept of "political consciousness", its formation, development and establishment as a subjective aspect of politics. The article poses as a key issue the study of existing views on the political consciousness of military personnel, the refutation of common false approaches, and the promotion of new approaches to the political consciousness of military personnel.

To realize the set goal and solve problems, dialectics (involving the observation of phenomena in the course of movement, development and change), as well as revealing-descriptive and other methods were used. The work was written using a joint examination of facts, historical, historical-comparative, nomothetic, ideographic and a number of other methods.

The conclusions that were drawn from the analysis were remarkable, especially against the background of the new interpretation of the term "political consciousness" and taking into account the political consciousness of military personnel, free from political chaos. As a result of a professional interpretation of the concept of political consciousness, we came to the conclusion that political consciousness represents a socio-political context and is aimed mainly at the formation of stable social and political values, ideas, approaches and beliefs among the masses, groups and individuals.

Accordingly, prohibitions on the direct participation of military personnel in the political life of society do not at all mean that they should not have political consciousness, because the term "political consciousness" is associated not only with joining parties and participating in "political chaos".

Keywords: *political consciousness, soldier, army, armed forces, social-political life, military policy of the state, Armenia, Artsakh.*

ТЕРМИН «ПОЛИТИЧЕСКОЕ СОЗНАНИЕ» И ПОЛИТИЧЕСКОЕ СОЗНАНИЕ ВОЕННОСЛУЖАЩИХ

ДАВИД ТОРОСЯН

*соискатель кафедры политологии
факультета международных отношений
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – представить понятие «политическое сознание», его становление, развитие и становление как субъективный аспект политики. В статье в качестве ключевого вопроса рассматривается изучение существующих взглядов на политическое сознание военнослужащих, опровержение распространенных ложных подходов, продвижение новых подходов к политическому сознанию военнослужащих.

Для реализации поставленной цели и решения задач мы использовали диалектический (предполагающую наблюдение явлений в ходе движения, развития и изменения), а также описательный метод, а также методы, нацеленные на выявления новых фактов. Работа написана с использованием синтетического изучения фактов, исторического, историко-сравнительного, номотетического, идеографического и ряда других методов.

Выводы, ставшие результатом проведенного анализа, оказались примечательны, особенно в контексте новой трактовки термина «политическое сознание» и с учетом политического сознания военнослужащих, свободного от «политического хаоса». В результате профессиональной интерпретации понятия политического сознания мы пришли к выводу о том, что политическое сознание представляет собой социально-политический контекст и направлено главным образом на формирование устойчивых социальных и политических ценностей, идей, подходов и убеждений среди масс, отдельных групп и личностей. Соответственно, запреты на прямое участие военнослужащих в политической жизни общества вовсе не означают, что они не должны обладать политическим сознанием, поскольку термин «политическое сознание» связан не только с вступлением в различные партии и участием в политическом хаосе.

Ключевые слова: *политическое сознание, солдат, армия, вооруженные силы, общественно-политическая жизнь, военная политика государства, Армения, Арцах.*